Cal OES
GOVERNOR'S OFFICE
OF EMERGENCY SERVICES

# ԿԱՐԵՒՈՐ ՁԵՒԱԹՂԹԵՐ ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՀԱՄԱՐ

Ստորև տեղեկատվությունն ուղեցույց է՝ օգնելու ձեզ լրացնել անհրաժեշտ ձևաթղթեր հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքին դիմելու համար: Ձեզ հարկավոր կլինի լրացնել լրացուցիչ ձևաթղթեր՝ կախված ձեր վարչաշրջանից: Բոլոր ձևաթղթերը հասանելի են https://tinyurl.com/californiacourts կայքէջում կամ ձեր տեղական Գերագույն դատարանում: Ձեր տեղական դատարանի ինքնօգնության կենտրոնում հասանելի է լրացուցիչ աջակցություն, որը կարելի է գտնել այստեղ՝ https://tinyurl.com/selfhelpcourt.

## ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՎԱԹՂԹԵՐ

### GV-110

Դիմել հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական ժամանակավոր արգելքին, որը տևում է 21 օր:

### GV-100

Եթե ցանկանում եք, որ արգելքն ուժի մեջ մնա մեկից հինգ տարի ժամկետով:

### GV-109

GV-100 ձեւաթղթի օգտագործման համար, որը ձեզ կտեղեկացնի, թե երբ գնալ դատարան:

### CLETS-001

Իրավապահ մարմիններին տրամադրում է տեղեկատվություն, որն անհրաժեշտ է արգելքն իրագործելու համար:

## ՏԵՐՄԻՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ

**ԽՆԴՐԱՐԿՈՒ**
դուք, ձեւաթղթերը լրացնող անձը, ով հայցում է հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելք

**ՊԱՏԱՍԽԱՆՈՂ**
ճգնաժամում հայտնված անձ

**ՎԱՅՐ**
վարչաշրջանը, որտեղ ապրում է ճգնաժամում հայտնված անձը

**ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՎԱՐ**
դատարանի գրառումները կատարող անձ

# GV-110

## ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔ

- 1-ին քայլով լրացրեք ձեր տեղեկատվությունը եւ նշեք վանդակը, որը վերաբերում է ճգնաժամում հայտնված անձի հետ ձեր ունեցած հարաբերությանը: Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքին դիմելու համար ձեզ անհրաժեշտ չէ իրավաբան, բայց եթե ունեք, կարող եք ներառել նրա տեղեկատվությունն այստեղ:
- 2-րդ քայլով լրացրեք ճգնաժամում հայտնված անձի մասին տեղեկատվությունը: Համոզվեք, որ լրացրել եք ամբողջ պարտադիր տեղեկատվության դաշտերը, որոնք նշված են աստղանիշով (*): Մնացած բաժինները կլրացվեն դատարանի կողմից:

# GV-100

## ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՀԱՄԱՐ (1-5 ՏԱՐԻ)

- Եթե դուք չգիտեք ճգնաժամում հայտնված անձի դատվածության պատմությունը կամ ինչ հրազեններ ունի, կարող եք «Ոչ» նշել 4-րդ եւ 5-րդ քայլերում: **«Ոչ» նշելը ընդունելի է դատարանի կողմից:**
- 6-րդ քայլով ձեզ հարկավոր է ներկայացնել փաստեր՝ որոնք ցույց են տալիս՝ որ այդ անձը կարող է վնասել ինքն իրեն կամ այլոց: Ներառել ցանկացած տեղեկատվություն՝ որը կօգնի դատավորին հասկանալ՝ թե ինչու է անհրաժեշտ արգելք և ուրիշ ինչ լուրջ գործողություններ են նրանք ձեռնարկել՝ որոնք չեն աշխատել:

# GV-109

## ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

- Պետք է դատարան բերեք այս ձևաթուղթը և տեղեկատվություն տրամադրեք 1-ին և 2-րդ քայլերից: Այս ձևաթղթի մնացած բաժինները կլրացվեն դատարանի կողմից և ձեզ կվերադարձվեն:
- Դատարանը կօգտագործի այս ձևաթուղթը, որպեսզի տեղեկացնի ձեզ դատարան ներկայանալու ամսաթիվը, որը կարող եք տեսնել 3-րդ քայլում:

# CLETS-001

## CLETS-Ի ՄԱՍԻՆ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- CLETS նշանակում է «Կալիֆոռնիայի իրավապահ մարմինների հեռահաղորդակցության համակարգ»: Սա համակարգչային ցանց է, որն իրավապահ մարմիններին հնարավորություն է տալիս օգտվել նահանգային և ազգային տեղեկատվությունից՝ հանրային անվտանգության նկատառումներից ելնելով:
- Այս ձևաթուղթը տեղեկատվություն է տրամադրում իրավապահ մարմիններին, որպեսզի նրանք կիրառեն հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքը, եթե այն տրվի: Լրացրեք այս ձևաթուղթն այնքան, որքան կարող եք և տվեք այն դատական գործավարին:
- **Այս ձևաթուղթը գաղտնի է և առկա չի լինի դատական ֆայլում:**

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՁԵՎԱԹՂԹԵՐ

Չնայած Կալիֆոռնիայի բոլոր վարչաշրջաններն օգտագործում են ձևաթղթերի նույն հիմնական փաթեթը, ձեր վարչաշրջանը կարող է լրացուցիչ փաստաթղթեր պահանջել: Տեսնելու համար, թե արդյոք ձեզ հարկավոր են լրացուցիչ ձևաթղթեր՝ կապվեք ձեր դատական գործավարի հետ կամ օգտվեք ձեր դատարանի կայքէջից՝ **tinyurl.com/findmycourt**.

---

Cal OES
GOVERNOR'S OFFICE OF EMERGENCY SERVICES

Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական ժամանակավոր արգելքի մասին մանրամասների համար այցելեք **GunSafety.CA.gov**